
ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉՅԱՆԻ «ԱՔԵՂԱ» ՕՊԵՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԱՐՇԱԿՅԱՆ

«...Գալով «Աքեղա»-ին, ես չի պիտի ուզեի, որ Միհրանը իր քով ունեցածը ցույց տար Ձեզի, քանի որ բավական փոփոխություններ ըրած եմ և ինք չունի այդ վերջնական ձև ստացած «Աքեղա»-ն, անանկ որ կիսամաթ թե օր մը Հայրենիքիս մեջ ներկայացվի պետք եղած ձևով»¹:

Բ.ԿԱՆԱՉՅԱՆ

Ճիշտ 75 տարի առաջ՝ 1939-ին, Բեյրութում «Կրան Թեաթրի» բեմում տեղի ունեցավ կոմպոզիտոր, խմբավար և մանկավարժ Բարսեղ Կանաչյանի (1885-1967) «Աքեղան» օպերայի պրեմիերան, ինչը համարվեց երևույթ մեր «գեղարուեստին մեջ, և պատիվ կը բերե ոչ միայն Պ.Բ.Կանաչեանին, այլև հայ համայնքին»²: Իսկ «Ազդակն» իր «Ձայնի եւ ճիպոտի վարպետը («Աքեղայի» ներկայացման առթիւ). Օփերա Աքեղան՝ Պէյրութի մէջ» հոդվածում գրեց. «Երբ կարդացի այս կարճ ծանուցումը, կուրծքս ուռեցաւ հպարտանքով, բայց հոգիս ալ ճմլուեցաւ դառնութեամբ: Հպարտանք՝ ցեղային կենսունակութեան մասին: Այնպիսի ատեն մը, երբ ուրիշ ազգեր, անհամեմատօրէն մեծ ու հարուստ, դեռ չկրցան մարդավարի տաղ մը անգամ հիւսել, գաղթական ու հայրենագուրկ հայը ահա երեւան կը հանէ ամբողջ օփերա մը, երաժշտութեան ամենէն նուրբ ու կնճռոտ հիւսքը»³:

¹ Աթայան Ռ., Բարսեղ Կանաչյան, Բ.Կանաչյան, Մեներգեր, խմբերգեր, Երևան, 1969, էջ 9:

² ԳԱԹ, Բ.Կանաչյանի ֆոնդ, N 12, Լրագրային կտրտուկներ, 34 փաթեթ, 42 թերթ:

³ Ձայնի եւ ճիպոտի վարպետը («Աքեղայի» ներկայացման առթիւ). Օփերա Աքեղան՝ Պէյրութի մէջ, ԳԱԹ, Բ.Կանաչյանի ֆոնդ, N 12, Լրագրային կտրտուկներ, 34 փաթեթ, 42 թերթ:

Կանաչյանն իր երգային օպերայի լիբրետոն կազմել էր ըստ Լևոն Շանթի (1869-1951) «Հին աստվածներ» դրամայի:

Լ.Շանթի «Հին աստվածներ» պատմական դրաման, որը գրվել էր 1909-ին և հրատարակվել 1912-ին, հայ գրականության և թատրոնի պատմության մեջ սիմվոլիզմի ամենացայտուն դրսևորումներից էր և Շանթի ստեղծագործության գլուխգործոցը: Կ.Պոլսում և Անդրկովկասում բուռն վեճերի ծնունդ տված դրաման ունեցավ բեմական տասնյակ մարմնավորումներ, որոնց մասնակցեցին հայ թատրոնի առաջատար ուժերը:

Հայտնի է, որ Լ.Շանթը 1929-ին բնակություն է հաստատում Բեյրութում, իսկ դրանից ընդամենը 4 տարի անց Բեյրութ է տեղափոխվում և մինչև կյանքի վերջը այդտեղ ապրում ու ստեղծագործում Բ.Կանաչյանը:

Պատահական չէ, որ Լ.Շանթի «Հին աստվածները» Սփյուռքում առաջին անգամ բեմադրվեց հենց Բեյրութում. 1944-ին Գասպար Իփեկյանն իր թատերախմբի ջանքերով ներկայացնում է դրաման, որն առաջ է բերում մեծ արձագանք⁴: 1952-ին ի հիշատակ նորերս վախճանված Լ.Շանթի՝ Գասպար Իփեկյան թատերախումբը նորից է բեմադրում «Հին աստվածները». ներկայացումը մեկ ամսվա ընթացքում կրկնվում է 8 անգամ⁵:

«Աբեղա» օպերան Բ.Կանաչյանը նվիրել է իր տիկնոջը՝ Քրիստինե Կանաչյանին⁶, հենց նա էլ օպերայի առաջնախաղի ժամանակ կատարեց գլխավոր հերոսուհու՝ Սեդայի դերերգը:

Ինչպես տեղեկանում ենք կլավիրի ձեռագրի վրա արված գրառումից՝ ««Աբեղան» առաջին անգամ ներկայացուեցաւ 1939 թուականին Պէյրութի մէջ, գլխավոր դերակատարներ՝

Աբեղա՝ Տօքթ. Է.Էմմանէան,
Սեդա՝ Տիկ. Քր.Կանաչեան,
Իշխան՝ պրն Յ.Ասլանեան,
Քրմապետ՝ պրն Ս.Սարգիսեան»⁷:

Ի դեպ, երգիչներից շատերն առաջին անգամ էին բեմ դուրս գալիս: Ներկայացմանը մասնակցում էր նաև «Գուսան» երգչախումբը:

Ներկայացումը ղեկավարում էր հեղինակը՝ Բ.Կանաչյանը. «Կանաչեանի

⁴ Տե՛ս «Ազդարար», 25 մայիսի, 1944: «Ազդակ», 1 յունիսի, 1944:

⁵ Ասատրյան Ա., Լիբանանահայ թատրոն, Երևան, 2011, էջ 44-45:

⁶ Կանաչեան Բ., Աբեղան, Գուսաներգոյթին երեք արար, ԳԱԹ, Բ.Կանաչյանի ֆոնդ, N 1:

⁷ Նույն տեղում:

օդին մեջ բարձրացող ձեռքերը յոգնության դողը չունեին այդ երեկոյ, բայց մեզմէ յուրաքանչիւրը կը զգար թէ ինչ ռոպսերու ծնունդ էին ծայներու այդ հոյակապ ալիքները»⁸:

1939-ի մայիսի 16-ի համարում «Ազդակը» տպագրեց «Տպաւորութիւններ «Աբեղան» օփերային ներկայացումին առթիւ» հոդվածը՝ մայիսի 3-ին տեղի ունեցած ներկայացման առիթով: «Երաժշտագետ Կանաչեանի Օբերան գեղարվեստական հազուագիւտ վայելք մը տուաւ Մայիսի 3ի գիշերը: Ուրիշ երկրի մը մեջ, ուրիշ ազգի մը մօտ, Կանաչեան պիտի ունենար նախանձելի դիրքի մը բոլոր առավելութիւնները: Որովհետեւ իրապէս արուեստագէտ է, բառին երոպական իմաստով: Անոր յօրինած երաժշտութիւնը այնքան ինքնատիպ ու այնքան նրբին էր, որ թերեւս անմատչելի գայ ոմանց: Իր Օբերայով՝ Կանաչեան եկաւ ապացուցանելու որ ինք ոչ միայն գիտէ արուեստին տանիլ հայ Ֆօլքլօրը, այլ նաեւ կրնայ ժողովուրդին բերել մաքրակրօն երաժշտութիւնը: Եւ եթէ գտնուեցան ոմանք որ չկրցան մէկ անգամէն ըմբռնել մեծութիւնը ներկայացումը արուեստին, այդ անոր համար է, որ հայ ժողովուրդը քիչ անգամ կը լսէ այդքան բիւրել ծայներու ներդաշնակութիւն: Երաժշտութեան բնագոյնը ամէն հայու մէջ կայ, բայց բարքերու, միջավայրերու ազդեցութեան տակ ան գրեթէ կորսնցուցած է բարձր, զուտ երաժշտութեան ճաշակը: Քանի մը այսպէս երեկոներ, և վստահ եմ որ Կանաչեանը բեմ պիտի բարձրացնենք մեր ձեռքերուն վրայ: Անթրի էր երաժշտութիւնը: Խօսիլ մանրամասնօրեն՝ կրնան միայն անոնք որ երաժշտագէտ են: Կանաչեանի այս գործը պիտի ապրի և ապրեցնէ»⁹:

«Աբեղան» ջերմ ընդունելություն է գտնում: «Անոնք որ շատ անգամ կը գանգատուին թէ մեր ժողովուրդը չի գնահատեր երաժշտութիւնը, թող գային և տեսնենին Կրան Թեաթրի առջև պարզուող տեսարանը, չորեքշաբթի իրիկուն, Աբեղան օփերայի ներկայացման առթիվ: Ոչ միայն ծայրե ի ծայր լեցուն էր ընդարձակ սրահը, այլև բազմաթիվ անձեր...բարեխոսութեան կը դիմէին տոմս ճարելու համար: Ի զուր կը պատասխանուէր թէ օրեր առաջ արդեն սպառած են տոմսերը:

-Աթոռ մը գնել տուեք:

Կամ

⁸ ԳԱԹ, Բ.Կանաչյանի ֆոնդ, N 11, Լրագրային հոդվածներ՝ ամփոփված մեկ տետրում, 51 էջ:

⁹ Տպաւորութիւններ «Աբեղան» օփերային ներկայացումին առթիւ, «Ազդակ», 16 մայիսի, 1939:

-Ուտքի վրայ կը կենանք:

Ինչո՞ւ է այս շահագրգռությունը:

Հետաքրքրությո՞ւնը անծանօթին հանդեպ: Ամենեւին: Ամեն բանէ առաջ գործնական, մեր ժողովուրդը համտես չընէր իր չգիտցած բաները: Մանաւանդ երբ քիչ մը աղի են անոնք...

Ծիշո՞ղ հակառակը: Եթէ ժողովուրդը գունդագունդ դիմեց թատրոն, պատճառը այն էր որ կը ճանչնար - և շատ լավ - գործին երկու սիններն ալ. -Պ. Լ. Շանթ եւ Պ. Բ. Կանաչեան: Մէկը՝ խօսքի, միւրը՝ ծայնի վարպետ:

Արդարացա՞վ սնուցուած վստահությունը:

Ի պատիվ Պ. Բ. Կանաչեանի պէտք է ըսել թէ՛ այո՛»¹⁰:

Բեմադրությունն իրականացրել էր Տիրան Աճեմյանը, ով «ցոյց տուաւ ճաշակ և ճիգի գեղեցկություն: Ավելի լայն միջոցներով, ավելի երկար փորձերով (մանաւանդ բուն իսկ բեմին վրայ), ավելի ազատ պայմաններու տակ, ան պիտի ըլլայ մեր լավագոյն բեմադրիչներէն մէկը: Շատ յաջող էին իր կողմէ պատրաստուած բեմայարդարանքը և դիմայարդարանքը»¹¹:

Թե՛ն ներկայացման մեջ ընդգրկված էին սիրողներ և ոչ պրոֆեսիոնալ երգիչներ, միակ բացառությունն էր Արման Թոքատյանը, սակայն «ժողովուրդը սիրով պիտի ուզէ երկրորդ, երրորդ անգամ տեսնել զայն, որքան ալ ծանոթ ըլլան բեմադրութեան նիւթական ու բարոյական թեքնիք դժվարությունները: Պ. Բ. Կանաչեան կրնայ հպարտանալ որ նոր դափնի մը շահեցաւ»¹²:

«Աբեղայի» լիբանանյան պրեմիերայից ճիշտ քառորդ դար անց օպերայի հնչյուններն առաջին անգամ հնչեցին կոմպոզիտորի հայրենիքում: 1964թ. հոկտեմբերին Միհրան Թումանճանը Հայաստանի կոմպոզիտորների միության դահլիճում գեկուցումով ներկայացրեց Կանաչանի «Աբեղա» ստեղծագործության հեղինակային առաջին տարբերակը: Երաժշտությունը դաշնամուրով չորս ձեռքով ցուցադրում են դաշնակահարուհի Մարջան Մխիթարյանն ու Ռոբերտ Աթայանը: Ստեղծագործությունն արժանանում է ունկնդիրների ջերմ հավանությանը:

¹⁰ ԳԱԹ, Բ. Կանաչյանի ֆոնդ, N 11, Լրագրային հոդվածներ՝ ամփոփված մեկ տետրում, 51 էջ:

¹¹ Տպաւորութիւններ «Աբեղան» օփերային ներկայացումին առթիւ, «Ազդակ», 16 մայիսի, 1939:

¹² Զայնի եւ ճիպտի վարպետը («Աբեղայի» ներկայացման առթիւ). Օփերա Աբեղան՝ Պէյրութի մէջ, ԳԱԹ, Բ. Կանաչյանի ֆոնդ, N 12, Լրագրային կտրտուկներ, 34 փաթեթ, 42 թերթ:

Այդ օրվանից անցել է հիսուն տարի, իսկ «Աբեղան» այդպես էլ շարունակում է անձանոթ մնալ հայ հանդիսատեսին ու երաժշտասերին:

Իսկ դրա պատճառն այն է, որ մինչ օրս հայրենիքում չի բեմադրվել «Աբեղան», չի բեմադրվել նաև այն պարզ պատճառով, որ մինչ օրս անտիպ է¹³: Օպերայի ձեռագիր կլավիրն այսօր գտնվում է Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում և համեստաբար սպասում ոչ միայն իր հետազոտողին, այլև հրատարակչին ու կատարողին:

Կանաչյանը երազում էր, որ իր ստեղծագործությունները հնչեն հայրենիքում, տպագրվեն: 82-ամյա կոմպոզիտորը պատրաստվում էր այցելել հայրենիք, բայց ... չհասցրեց: Սակայն նրա արխիվը հանգրվանեց Երևանում: Անհրաժեշտ է, որ մենք տեր կանգնենք Կանաչյանի ժառանգությանը, հրատարակենք ու բեմադրենք նրա ստեղծագործությունների գլուխգործոցը համարվող «Աբեղա» օպերան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սիյուռքահայ երաժշտական արվեստի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Բարսեղ Կանաչյանի (1885-1967) ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Աբեղա» օպերան (1939), որի լիբրետոն կոմպոզիտորը կազմել է ըստ Լևոն Շանթի «Հին աստվածներ» պատմական դրամայի (1909):

¹³ Միակ բացառությունը 1969-ին Երևանում լույս տեսած՝ Կանաչյանի մեներգերի և խմբերգերի ժողովածուն է՝ Ռոբերտ Աթայանի ծավալուն նախաբանով: Ժողովածուի հրատարակության համար հիմք հանդիսացավ Բելյուրիի հոբելյանական հրատարակությունը, որն ավարտվել է 1948-ին և որի համար, ինչպես տեղեկացնում է Հոբելյանական կենտրոնական հանձնախմբի ծանուցումը, «հեղինակը երգերը դրել է իրենց վերջնական ձևի մեջ»: Վերջին չորս երգը վերցված է Բաղդատի Հայ երիտասարդական երկսեռ միության «Կոմիտաս» երգչախմբի միջոցներով կատարված հրատարակությունից: Դրանք հեղինակի վերջին աշխատանքներն են: Ընդ որում՝ ժողովածուն ընդգրկում է Կանաչյանի երգերի մի մասը միայն: Տրամադրված ծավալի սահմաններում ընտրված են այն երգերը, որոնց տպագրությունն առավել առաջնահերթ է ճանաչվել, ըստ այդմ հաշվի է առնվել նաև հեղինակի նախընտրությունը: Ժողովածուն ընդգրկում է յոթ մեներգեր (դրանց թվում է «Ծիծեռնակ» հանրահայտ երգի յուրատիպ ներդաշնակումը) և կատարման համար տարբեր աստիճանի դժվարություն ներկայացնող 10 խմբերգեր: Մեծածավալ խմբերգերից զետեղված են «Դալիլոն» և «Նանորը», «Օրորը» տրված է թե՛ դաշնամուրի և թե՛ երգչախմբի ուղեկցությամբ տարբերակներով, որոնք հավասարապես լայնորեն կատարվում են (տե՛ս **Բարսեղ Կանաչյան**, Մեներգեր, խմբերգեր, Երևան, 1969):

Յավրք, այսօր օպերան մոռացության է տրված: Հեղինակն առաջ է քաշում Երևանում օպերայի բեմադրության անհրաժեշտության հարցը:

Բանալի բաներ – Բ.Կանաչյան, Լ.Շանթ, «Աբեղա», օպերա:

ОПЕРА «АБЕХА» БАРСЕГА КАНАЧЯНА

ТАТЕВИК АРШАКЯН

В творчестве Барсега Каначяна (1885-1967), одного из крупнейших представителей музыкальной культуры армянской диаспоры, особое место занимает опера «Абеха» (1939), либретто которой композитор составил по исторической драме Левона Шанта «Старые боги» (1909).

К сожалению, сегодня опера предана забвению. Автор поднимает вопрос о необходимости ее постановки в Ереване.

Ключевые слова – Б. Каначян, Л. Шант, «Абеха», опера.

BARSEGH KANACHYAN'A OPERA «ABEGHA»

TATEVIK ARSHAKYAN

Barsegh Kanachyan (1885 -1967) is one of the most distinguished west Armenian musical figures, who created the «ABEGHA» opera in 1939. This opera of Kanachyan is considered to be a unique composition. The libretto of the opera based on Levon Shant's «Ancient Dieties» (1909) is a historical play.

The opera is unfortunately disregarded today. However, Kanachyan thought the staging of the opera «ABEGHA» in the Armenian National Academic Theatre of Opera and Ballet after Alexander Spendiarian is all-important.

Key words – B.Kanachyan, L.Shant, «Abegha», opera.